

խակ լեզուն քեզ մը բռնուեր էր եւ շատ դժուարութեամբ կ'արտասանէր առաջին բառը երբ խօսելու սկսէր :

Մութ ու խոր ու խորհրդաւոր բան մը կար իր սեւ աչքերուն մէջ, զոր կրցայ ինծի բացատրել, որուն կրցայ թափանցել այն ատեն միայն երբ իր շարադրութիւնը կարգացի :

Ահաւաստիկ այդ շարադրութիւնը նոյնութեամբ .

«Երբ ես իմ հայրենիքիս մէջ կը գտնուէի, ինքզինքս շատ ուրախ կը զգայի, որովհետեւ ազատ շունչ կը փչէի իմ հայրենիքիս մէջ, կը վայելի անոր արտապերած պտուղները, օդը, չուրը խմելով աւելի հաճոյք կսկայի :

«Բայց եկաւ այն տարին, որ սարսափ տարածեց ամէն հայութեան մէջ : Կատղած թիւրքերը, թեւերնին սոտած, ձեռքերնին առած սուր ու թուր, եկան մեր վրայ ու սկսան պաշարել մեր հայրենիքի դուռներու սեմերը, որ կարող չըլլան ոչ մէկ անձ փախչի օտար երկիր :

«Եկան ու ներս սողացին օձի մը պէս եւ համոզելով հայերը թէ, ըսին ձեզի Ամերիկա պիտի տանինք, ելէք ու պատրաստուեցէք, ոչ մէկ բան առէք ձեր հետ :

«Այսպէս ամէն հայութիւն դուրս հանեցին ըսկսան խումբ, խումբ յառաջացնել դէպի արտասփայրերը, ու տանիլ այն տեղերը, ուր ոչ մէկ անձ չէ կարող տեսնել ու տարին Եփրատ գետի վրայէն անցուցին ու դէպի առաջ քշեցին մէկ քանի ժամ հեռացուցին քաղաքէն, եւ գետակի մը եզրերին վրայ նստեցնել տուին հայերը :

«Եւ անդիէն ձայնի մը կոչիւն լսուեցաւ ու ճէնտերմէներուն մեծը ըսաւ .— Ամէն հայ պէտք է արանձին քովս կայ ու անոր վրան ու դուրսը պիտի խուզարկուի : Եւ հայերը ելլելով կացին մեծին քով . ամէն տեղերնին նայեցան եւ եզած դրամները եւ ոսկեղենները արնելով կը հեռացնէին իրենց քովէն : Այսպէս ամենուն վրայ ալ նայեցան եւ վերջացաւ խուզարկութիւնը :

«Եւ այսկից վերջ բարձրաձայն աղմուկ մը լսուեցաւ ու մեծը ըսաւ .— Ով որ էրիկ մարդ է թող մէկ կողմ քաշուի : Ամէնն ալ նոյն ձեւով

խօսքերնին կատարեցին ամէն տեսակէտով :

«Կէս ժամ վերջ էրիկ մարդիկը արնելով հեռացուցին կիներուն քովէն ու քառորդ ժամ տարին ու սկսան զնդակահար ընել : Եւ մէկ մասն ալ իրարու կապելով գլուխնին կտրեցին սուրով :

«Այս սարսափին ձայնը արդէն հասած էր կիներուն եւ իրար կը բզկտէին, կը պօռային, կը կանչէին : Ոմանք կ'ըսէին, ուր մնաց իմ դաւակա, ուր զնաց ամուսինս եւ ոմանք ալ կուլային ու կ'ըսէին ուր մորդեցին եղբայրս դաւակա :

«Այսպէս ահուդողի ու սարսափի մէջ մընացած, չէին գիտեր իրենց ըրացները . ուր երթանք կուլային ու իրարու կը փատտուէին, երեսնին կը ճանկուտէին ու ոմանք ալ զէնքով կսպանուէին :

«Այս ազաղակին վրայ հասան ձենտերմէները . հաւաքելով այդտեղ կիները ու փոքրները կսպանէին ու կը տանէին եւ ասոր վրայ ալ հասաւ քիւրտերու թիւրքերու խուժանը : Անոնք ալ գործի մէջ մտան . ամէն մարդ իր ուզածը քաշած կը տանէր ու մէկ կողմէն ալ ճէնտէրմէները օրիօրաները կը ծախէին քանի մը մէճիտի : Վերջապէս ամէնն ալ քաչկրտելով տարին ուզած կողմերնին . ան որ չէր երթար ծեծելով կը տանէին . եթէ նորէն չերթային կը քաչէին դաշունը ու սրտին հարուած մը տալով գետին կը փռէին, ուրիշ մը եւս կ'արնէին ու կ'երթային :

«Այս սարսափի մէջ ես ինկած էի երեսի վրայ ու կուլայի ու կ'ըսէի . ուր մնացին իմ մեծհայրս . կ'աղաղակէի եւ մայրս գալով զիս վեր արաւ ու ըսաւ . մի լար դաւակա, թիւրքերը ըսպանեցին մեծ հայրդ եւ եղբայրդ : Ձայն մի հաներ, կուկան մեզ ալ կսպանեն :

«Այս լսեցի թէ չէ ես շատ վախցայ, ձայնս կտրեցի :

«Մենք ալ ելելով զիւրի մը մէջը մըտանք ու այնտեղը մէկ քանի ամիսներ անցուցինք մեր վրայէն . ու հետոյ խարբայութեամբ եկանք մեր քաղաքը :

«Երբ ես եկայ իմ ծննդավայրս այնքան ուրախ զգացի որ չեմ կրնար պատմեր . համբուրեցի գետնի հողը եւ կացի քաղաքին մէջ :